Հավելված N 1
Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի
օգոստոսի 18-ի N 34-L որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինը Հանրային հեռարձակողի խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

2. Խորհուրդը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հանրային հեռարձակողի համար լիազոր մարմինն է, որն իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված գործառույթներ:

3. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ և Խորհրդի վեց անդամ: Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:

5. Խորհրդի անդամները նշանակվում են մրցութային կարգով վարչապետի կողմից՝ վեց տարի ժամկետով:

6. Խորհրդի անդամին ներկայացվող պահանջները, ինչպես նաև Խորհրդի անդամի անհամատեղելիության պահանջները սահմանվում են օրենքով:

7. Խորհուրդն ունի ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

8. Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում: Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդումը հրապարակվում է Խորհրդի պաշտոնական կայքում:

9. Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդումը հրապարակվում է Խորհրդի պաշտոնական կայքում:

II. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ

10. Խորհուրդը՝

1) սահմանում է հանրային հեռարձակողի տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը և տեսալսողական ծրագրերի թիվը.

2) սահմանում է Հանրային հեռարձակողի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը և ուղղությունները.

3) հաստատում է Հանրային հեռարձակողի աշխատողների հաստիքացուցակը, պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմանները և վարձատրման կարգը.

4) սահմանում է Հանրային հեռարձակողի այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու այլ Հեռարձակողներում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներում.

5) սահմանում է Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթի անցկացման կարգը.

6) նշանակում է Հանրային հեռարձակողների՝ մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրեններին.

7) Հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների ներկայացմամբ նշանակում և ազատում է գործադիր տնօրենների տեղակալներին.

8) յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 20-ը լսում է Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության մասին գործադիր տնօրենների հաշվետվությունները.

9) Հանրային հեռարձակողների տնօրենների ներկայացմամբ պարբերաբար հաստատում է ծրագրային քաղաքականությունը.

10) հաստատում է իր կանոնադրությունը և Հանրային հեռարձակողի կառուցվածքը.

11) հաստատում է Խորհրդի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքացուցակը.

12) հաստատում է Հանրային հեռարձակողի լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները.

13) ստացված բողոքների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնների խախտման դեպքերը և ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն.

14) առնվազն տարին մեկ անգամ կազմակերպում է Հանրային հեռարձակողների գործունեության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություններ ու հրապարակում դրանց արդյունքները.

15) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված այլ իրավասություններ.

16) Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում կարգավորող պետական մարմին.

17) հայտարարում է Հանրային հեռարձակողի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ.

18) գործադիր տնօրենների և նրանց տեղակալների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

19) անդամների ձայների մեծամասությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ, երկշաբաթյա ժամկետում որոշում է կայացնում խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու վերաբերյալ Հանրային հեռարձակողների հիմնադրի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին.

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

11. Խորհրդի որոշումներն իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանրային հեռարձակողների գործադիր տնօրենները:

III. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

12. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և նիստերի միջոցով:

13. Խորհրդի նախագահի բացակայության, ինչպես նաև նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է նրան փոխարինող Խորհրդի անդամը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի տարիքով ավագ անդամը:

14. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

15. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

16. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով Խորհրդի անդամների համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով: Հեռակա

կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:

17. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

18. Խորհուրդն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը: Խորհուրդն իր գործունեության, ընդունած որոշումների և ծրագրերի մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին և հրապարակում իր պաշտոնական կայքում:

19. Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է հետևյալ կարգով.

1) Խորհուրդը իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ 4 տարի ժամկետով.

2) Խորհրդի նախագահ չի կարող ընտրվել Խորհրդի անդամի թափուր պաշտոն լինելու դեպքում: Խորհրդի անդամը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի նախագահ.

3) Խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգը սահմանվում է կարգավորող պետական մարմնի որոշմամբ.

4) երեք անգամ անընդմեջ Խորհրդի նախագահ չընտրելու դեպքում Խորհուրդն արձակվում է.

5) արձակված խորհուրդը շարունակում է իր գործունեությունը մինչև նոր Խորհրդի ամբողջական ձևավորումը:

20. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի և նրա աշխատակազմի գործունեությունը.

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները և նիստերի արձանագրությունները, բացառությամբ խորհրդի նախագահին պաշտոնանկ անելու մասին արձանագրությունը և որոշումը, որոնք ստորագրում է խորհրդի ավագ անդամը.

3) վերահսկում է Խորհրդի որոշումների կատարումը.

4) ընդունում և ազատում է Խորհրդի աշխատակազմի աշխատողներին.

5) համակարգում և ապահովում է Խորհրդի բնականոն աշխատանքը.

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում ներկայացնում է Խորհուրդը.

7) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Խորհրդի անունից և ներկայացնում է նրանց շահերը

8) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

21. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

22. Խորհրդի աշխատակազմի նպատակը և խնդիրը Խորհրդի՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին Խորհրդի մասնակցության ապահովումն է:

23. Խորհրդի աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

24. Խորհրդի աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

25. Խորհրդի աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Խորհրդի աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

27. Խորհրդի և Խորհրդի աշխատակազմի խորհրդանիշն է՝

ՀՀԽ

որը կարող է ներառվել Խորհրդի աշխատակազմի կնիքի և դրոշմակնիքի տեքստերում: «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» պետական հիմնարկի ռուսերեն լրիվ անվանումն է՝ ГОСУДАРСТВЕННОЕ УЧРЕЖДЕНИЕ "АДМИНИСТРАЦИЯ СОВЕТА ОБЩЕСТВЕННОГО ВЕЩАТЕЛЯ", ռուսերեն կրճատ անվանումն է՝ ГУ "АДМИНИСТРАЦИЯ СОВЕТА ОБЩЕСТВЕННОГО ВЕЩАТЕЛЯ", իսկ անգլերեն լրիվ անվանումն է՝ STATE INSTITUTION "ADMINISTRATION OF THE COUNCIL OF PUBLIC BROADCASTER", անգլերեն կրճատ անվանումն է՝ SI "ADMINISTRATION OF THE COUNCIL OF PUBLIC BROADCASTER":

28. Խորհրդի աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև Խորհրդի լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները

կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

29. Խորհրդի աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

30. Խորհրդի աշխատակազմի գույքը ձևավորվում է կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով և հաշվառվում է նրա հաշվեկշռում:

31. Խորհրդի աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

VI. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

32. Աշխատակազմի կառուցվածքը ներառում է կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք իրենց գործառույթներն իրականացնում են համագործակցելով միմյանց հետ: Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները գործում են աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ:

33. Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կազմակերպում ու ղեկավարում են ստորաբաժանումների գործունեությունը, իրականացնում են ստորաբաժանման աշխատողների միջև աշխատանքի բաշխումը, ապահովում աշխատանքային կարգապահությունը և պատասխանատու են իրենց առջև դրված խնդիրների իրականացման համար:

VII. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

34. Խորհրդի աշխատակազմի կառավարումն ու ղեկավարումն իրականացնում է Խորհրդի նախագահը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

35. Խորհրդի նախագահը՝

ա) ընդունում և ազատում է Խորհրդի աշխատակազմի աշխատողներին.

բ) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Խորհրդի աշխատակազմի անունից և ներկայացնում նրա շահերը, տալիս է Խորհրդի աշխատակազմի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր

գ) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Խորհրդի աշխատակազմին ամրացված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) ապահովում է Խորհրդի աշխատակազմում անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

ե) Խորհրդի աշխատակազմի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

զ) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

է) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

36. Խորհրդի աշխատակազմի ղեկավարը՝

ա) ապահովում է Խորհրդի աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը.

բ) կազմակերպում է Խորհրդում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

գ) կազմակերպում է Խորհրդի աշխատակազմում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

դ) Խորհրդի նախագահի հանձնարարությամբ կատարում է այլ աշխատանքներ:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

37. Խորհրդի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

IX. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

38. Խորհրդի աշխատակազմի վերակազմակերպման և նրա լուծարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ